

«ՀԱՅ ԳԻՐՔ» ՇՏԵՄԱՐԱՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու
Հայաստանի ազգային գրադարանի մատենագիտության և գիտական
հետազոտությունների բաժնի վարիչ

Տարբեր դարաշրջաններում, երբ հայ ժողովուրդը գոյատևման համար կառչել է փրկության ակունքներից, գիրքը հանդես է եկել իր ազգափրկիչ առաքելությամբ՝ ապագա սերունդներին ի պահ տալով պատմական փաստերը, գիտական ձեռքբերումները, գրական-գեղարվեստական պատկերացումները: Հայ գրքի պատմությունը զուգահեռվել է հայ տպագրության պատմությանը, որն անցել է զարգացման տարբեր փուլերով՝ ձևավորելով տպագրական արվեստի որոշակի սկզբունքներ: Յուրաքանչյուր դարաշրջան ինքնատիպության իր շեշտն է դրել հայ գրքարվեստի ձևավորման բարդ գործընթացի վրա՝ հնարավորություն ընձեռելով հաջորդ սերունդներին կատարելագործելու տպագրության արվեստը:

Հայաստանի ազգային գրադարանը ստեղծում է հնարավոր բոլոր պայմանները՝ հայ տպագիր գրքերը մեկ ընդհանուր դաշտում ամփոփելու և ներկայացնելու համար: Այստեղ կարևորվում են թվային գրադարանները, որոնք ավանդական գրադարանի համեմատ ունեն մի շարք առավելություններ.

1. Ժամանակի ճիշտ բաշխում և տնտեսում: Ընթերցողը հնարավորություն ունի առցանց տեղեկատվություն ստանալ պահանջված գրականության մասին:

2. Տեղեկատվության որոնման դյուրին համակարգի առկայություն ցանկացած վայրում:

3. Տեղեկատվության մատչելիություն:

4. Տեղեկատվության մատուցման նոր եղանակներ:

5. Տեղեկատվության պահպանության արդիականություն:

Հաշվի առնելով թվային գրադարանի առավելությունները և արդիական պահանջները՝ Հայաստանի ազգային գրադարանը ձևավորում է տարաբնույթ էլեկտրոնային շտեմարաններ, որոնց շարքում առանձնանում է «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանը, որի ստեղծման աշխատանքները սկսվել են 2010 թվականից ՀՀ

Գիտությունների ազգային ակադեմիայում, իսկ 2012 թվականից՝ Հայաստանի ազգային գրադարանում: Այսօր այս երկու գիտահետազոտական կենտրոններն աշխատում են զուգահեռ՝ համատեղելով շտեմարանի ստեղծման իրենց ջանքերն ու կարողությունները: Շտեմարանի ստեղծման սկզբունքը մեկն է՝ հայատառությունը: Նպատակը՝

1. Ամբողջական ներկայացնել հայ գրքի պատմությունը՝ տեսանելի դարձնելով պատմության հարցականները և օրինաչափ զարգացման պատկերը:

2. Հավաքագրել աշխարհով մեկ սփռված հայերեն կամ հայերեն հատվածներ պարունակող օտարալեզու գրականությունը:

3. Ճշտել աշխարհով մեկ սփռված գրքերի աշխարհագրական տարածքները՝ նշելով յուրաքանչյուր միավորի գտնվելու վայրը, ինչպես նաև ֆիզիկական վիճակը:

4. Պահպանելով հեղինակային իրավունքի նորմերը՝ թվայնացնել գրքերը՝ ընթերցողական լայն լսարանի ներկայանալու համար:

«Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանում ներառված են 1512 թվականից մինչև այսօր աշխարհի տարբեր հատվածներում տպագրված հայերեն, հայատառ, ինչպես նաև հայերեն հատվածներ պարունակող գրքերը: «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանում առանձնանում են նաև բազմալեզու հրատարակությունները, որոնց բնագիր լեզուներից մեկը հայերենն է: Ներառված են ատլասներ, քարտեզներ, ժողովածուներ, հմայիլներ (միայն հնատիպ շրջան), կատալոգներ, պատկերագրքեր, բառարաններ, պատմական, գեղարվեստական, կրոնական, քաղաքական, մասնագիտական տարաբնույթ գրքեր:

Շտեմարանը կառուցվում է հետևյալ սկզբունքով.

1. Կատարվում է գրքի մատենագիտական գրառում: Մատենագիտական նկարագրությունը հնարավորություն է տալիս ամփոփ տեղեկատվություն ստանալ գրքի տպագրության վայրի, տարեթվի, ստեղծողի, պատասխանատուների մասին: Մատենագիտական գրառման մեջ կարևորվում են բոլոր այն լրացուցիչ տեղեկությունները, որոնք հնարավորինս կոյուրացնեն գիրքն ուսումնասիրելու և ընկալելու ընթերցողական պահանջները: Մատենագիտական գրառման պատկերը հետևյալն է՝

Normal view | MARC view | ISBD view

Ուրբաթագիրք /

Type: Book

Publisher: Վենետիկ : տպ. Հակոբ Մեղապարտի, 1512

Description: 124 էջ ; 16 սմ.

Subject(s): [Միջնադարյան բժշկարան](#) | [Աղոթքներ](#) | [ՀԱԳ](#) | [Հայ հնատիպ գիրք](#)

Online resources: [Կարդալ առցանց](#)

Contents:

Tags from this library:

No tags from this library for this title.

average rating: 0.0 (0 votes)

Գրառումները հնարավորություն են տալիս կատարելու վիճակագրական վերլուծություններ: Պատմությունը փաստում է, որ հայ տպագրությունը Հակոբ Մեղապարտից հետո բուռն զարգացում է ապրել Վենետիկում, Կ. Պոլսում, Հռոմում, Լվովում և այլուր: Իսկ հատկապես 19-րդ դարում, կապված մշակութային կյանքի աշխուժացման հետ, շատացել են տպարանները, որոնք ընդգրկել են աշխարհագրական նոր տարածքներ, ինչն էլ ավելացրել է տպագրված գրքերի քանակը: 19-րդ դարից գրատպության արվեստը մտել է ժողովրդի առօրյայի մեջ, իսկ գիրքը դարձել է պահանջված հասարակական տարբեր խավերի կողմից: Զարգացման այս միտումը շարունակվել է 20-21-րդ դարերում՝ ընդգծելով գրքի արժեքը մեր իրականության մեջ: Հայ գրքի և տպագրության պատմական զարգացման ամբողջական պատկերն արտացոլված է «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանում, ուր որոնման դյուրին համակարգի միջոցով ստանում ենք հետևյալ պատկերը՝



Վիճակագրական այս պատկերը խոսում է հայ գրքարվեստի օրինաչափ զարգացման որակական հատկությունների մասին: Այստեղ առանձնացնենք 16-րդ դարը: Հրատարակված 33 գրքից 17-ը հայերեն տպագիր գրքեր են, որոնք տպագրվել են՝

ՎԱՅՐԸ	ԳՐՔԵՐԻ ՔԱՆԱԿԸ
Վենետիկ	8 գիրք
Կ. Պոլիս	6 գիրք
Հռոմ	3 գիրք

16-րդ դարում հրատարակված 16 գիրքը այլալեզու են, որոնք պարունակում են հայերեն հատվածներ:

«Հայ գիրքը 1512-1800 թթ.» մատենագիտական ցանկում հնատիպ շրջանն ընդգրկում է 1094 անուն գիրք: «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանում հնատիպ շրջանն ընդգրկում է 1099 անուն գիրք: Թվաքանակի տարբերությունը բացատրվում է նրանով, որ որոշ գրքեր ներառված են էլեկտրոնային շտեմարանում, բայց չեն ներառվել մատենագիտական ցանկում: Նշենք մեկ օրինակ՝ 1698 թ. Կ. Պոլսում հրատարակված «Հմայիլ»-ի մատենագիտական նկարագրությունը ներառված է «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանում, մինչդեռ չի ներառվել մատենագիտական ցանկում: Ավելին՝ «Հայ գիրքը 1512-1800 թթ.» գրքում կան գրքերի մատենագիտական նկարագրություններ, որոնք ներառում են 2 տարբեր գրքեր, իսկ շտեմարանում այդ գրքերն առանձնացված են որպես առանձին միավորներ: Օրինակ՝

1703 թ. Կ. Պոլիս - Յակոբ Տեռնենդբայր. Կտակգիրք – Եփրեմ Խուրի Ասորի. Յաղագս ապաշխարութեան

1706 թ. Վենետիկ - «Ժամագիրք սրբուիւոյ կուսին Մարիամու» - «Ժամամատոյց»

1715 թ. Վենետիկ - «Համառօտութիւն Աստուածաբանութեան» - «Լուծմունք դժուարիմացից եւ տարակուսանաց բանից Ալպերտին»

Նմանանատիպ գրքերը հիմնականում ունեցել են շարունակվող էջակալություն, բայց առանձին տիտղոսաթերթեր, որոնք էլ հիմք են դարձել գրքերն առանձին ներկայացնելու համար:

Նշենք նաև, որ մատենագիտական պրպտումների շնորհիվ հայտնաբերվում են գրքեր, որոնք կամ պարունակում են հայատառ հատվածներ, կամ բնագիրը երկլեզու է և որոնք դուրս են մնացել մատենագիտական ցանկերից: Առանձնացնենք երկու օրինակ.

1. 1812 թ. հրատարակված Յակոբ Շահան Զրպետեանի ուսումնասիրությունը՝ հիմնված Ֆրանսիայի Կայսերական գրադարանի 2 ձեռագրերի վրա, ուր ներառված են Մատթեոս Ուռհայեցու պատմությունից հայերեն և ֆրանսերեն հատվածներ: Հայերեն հատվածը ներկայացված է 58-92 էջերում, իսկ ֆրանսերենում ներառված են հայատառ հատվածներ:

2. Երկրորդ գիրքը 1926 թ. հրատարակված «Մարկոսի Ավետարանի» անգլերեն ուսումնասիրությունն է Ալբերտ Էդմունդսի խմբագրությամբ, ուր որպես հավելված ներկայացված են Մարկոսի Ավետարանից հայերեն հատվածներ:

Գրքերը ներառված չեն մատենագիտական ցանկերում, սակայն իրենց արժանի տեղն են գտել «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանում:

2. Շտեմարանի ստեղծման հաջորդ սկզբունքը մատենագիտական յուրաքանչյուր գրառմանը թվային տարբերակի կցումն է՝ գիրքն առցանց ընթերցելու համար: Թվայնացման աշխատանքներն իրականացվում են Հայաստանի ազգային գրադարանում և ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանում: Շտեմարանում թվային տարբերակները տեղադրվում են PDF ձևաչափով: Հայաստանի ազգային գրադարանում ավարտվել են հնատիպ շրջանի գրքերի թվայնացման աշխատանքները, ավարտին են մոտենում 1801-1850 թթ. գրքերի թվայնացման աշխատանքները: ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանում ընթացքի մեջ են 1920-ական թվականներին հրատարակված գրքերի թվայնացման աշխատանքները:

Թվայնացման գործընթացն արագացնելու, ինչպես նաև այլ վայրերում պահպանվող հայատառ գրքերը հայտնաբերելու նպատակով կատարվում են համացանցային որոնողական աշխատանքներ աշխարհի տարբեր գրադարաններում: Այս աշխատանքների արդյունքում հայտնաբերվում են գրքեր, որոնք չկան Հայաստանի

ազգային գրադարանի պահոցներում, կամ որոնք չեն ներառվել տարաբնույթ մատենագիտական ցանկերում: Արդյունքում՝ Հայաստանի ազգային գրադարանը համալրվում է նոր անուններով, կամ էլեկտրոնային շտեմարանի մեջ ներառվում է թվային տարբերակը: 2016 թ. ընթացքում Հայաստանի ազգային գրադարանը համալրած գրքերի մի քանի օրինակներ.

ԳԻՐՔԸ	ՎԱՅՐԸ	ՏԱՐԵԹԻՎԸ
Հմայիլ	Կ. Պոլիս	1726
Գիրք սաղմոսաց Դավթի	Կ. Պոլիս	1875
Երգարան, որ կը պարունակէ սաղմոսներ եւ հոգեւոր երգեր	Կ. Պոլիս	1892
Բերուզակ	Զմիռնիա	1890


Շարքը կարելի է շարունակել:

Գրքերի թվային տարբերակների ներբեռնումները կատարվում են և՛ աշխարհի տարբեր գրադարանների կայքերից, և՛ Հայաստանի Հանրապետության գիտական կենտրոնների կայքերից: Ներբեռնումներ են կատարվել Ֆրանսիայի, Գերմանիայի ազգային, Կոնգրեսի, Բոննի համալսարանի, Մյունխենի և մի շարք այլ հայտնի գրադարանների կայքերից: 2016 թ. ներբեռնված գրքերի պատկերը հետևյալն է.

ՀԱՍՅԵՆ	ԳՐՔԻ ՔԱՆԱԿԸ	ԷԶԵՐԻ ՔԱՆԱԿԸ
qahana.am	109 գիրք	19063 էջ
elib.am	49 գիրք	18783
ԵՊՀ	37 գիրք	7507 էջ
armedu.am	9 գիրք	2953
Բողլեյան գրադարան	9 գիրք	1591 էջ
http://www.nayiri.com	9 գիրք	7983 էջ
Անհատներից	9 գիրք	2364 էջ
HathiTrust	9 գիրք	3344 էջ
Հր. Աճառյանի անվան	6 գիրք	1103 էջ

լեզվի ինստիտուտ		
«Հայկական կրթական միջավայր» պորտալ	5 գիրք	656 էջ
ՀՀ ազգային արխիվ	4 գիրք	2141 էջ
elibrary.am	4 գիրք	592 էջ
www.atc.am	4 գիրք	1346 էջ
Գրքամոլ	4 գիրք	783 էջ
archive.org	3 գիրք	1261 էջ
Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գրադարան	152 գիրք	9510 էջ
Ավստրիայի ազգային գրադարան	2 գիրք	266 էջ
Academia.edu	2 գիրք	476 էջ
Ֆրանսիայի ազգային գրադարան	1 գիրք	243 էջ
Europeana	14 գիրք	2096 էջ
Վիքիպեդիա, Հայաստան	45 գիրք	9158 էջ
Այլ կայքեր	9 գիրք	1281 էջ

Պահպանելով հեղինակային իրավունքի նորմերը՝ այդ թվային տարբերակները կցվում են համապատասխան գրառումներին, որի արդյունքում բազմաթիվ գրքեր, որոնք ֆիզիկապես բացակայում են Հայաստանի Հանրապետության գրադարաններում, հնարավոր է առցանց ընթերցել: Վիճակագրական պատկերը հետևյալն է. «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարան ներառված թվային գրքերի քանակը կազմում է շուրջ **6200 անուն**: 2016 թ. առ 30.09.2016 թ. «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարան է ներառվել 1536 անուն կամ 321.314 թվային էջ:



Ինչպես նշեցինք՝ 1512-1800 թթ. հրատարակված գրքերի թվայնացման աշխատանքներն արդեն ավարտված են: Այլ գրադարաններից ու կայքերից կատարված ներբեռնումների շնորհիվ լրացվել են բացակա գրքերի թվային պատճենները, որի արդյունքում այս շրջանի 751 գրքի կցված է թվային տարբերակ: Ընդ որում՝ հնատիպ շրջանի 159 գիրք, ֆիզիկապես բացակա լինելով պահոցներից, հնարավոր է ընթերցել առցանց տարբերակով: Կատարված աշխատանքների շնորհիվ 2016 թ. միայն Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի գրադարանում թվայնացրել և Հայաստանի ազգային գրադարանին են տրամադրել 10 հնատիպ գրքի թվային տարբերակ, որի մեջ առանձնանում է հատկապես 1513 թ. հրատարակված «Պատարագատետր»-ը, 1704 թ. «Պարտեզ հոգետր»-ը, 1779 թ. հրատարակված «Սաղմոսարան»-ը: Archive.org կայքից էջ առ էջ ներբեռնվել և 3 գրքի կցվել է թվային տարբերակը: Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանի կողմից Հայաստանի ազգային գրադարանին են տրամադրվել մի շարք արժեքավոր գրքերի թվային տարբերակներ, որոնք բացակայում են գրադարանի պահոցներից: Զմանոյի

վանքում թվայնացվել և Հայաստանի ազգային գրադարանին են տրամադրվել 1714 թ. Հռոմում տպագրված «Չորք խոկմունք յաղագս յաւիտենականութեան» և 1717 թ. Կ. Պոլսում տպագրված «Համառօտ հաւաքումն իրաց մանաւանդագունից» հնատիպ գրքերի թվային տարբերակները:

Կարծում ենք՝ «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանը օժտված է անսահմանափակ հնարավորություններով՝ հայ գիրքն ընթերցողին մատուցելու, ինչպես նաև տեղեկատվական բոլոր դաշտերից օգտվելու համար: